ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՋԱՓՆՅԱԿ-2 ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ԱՋԱՓՆՅԱԿ, ՀԱԼԱԲՅԱՆ Փ., շենք 41Ա, 10-ՐԴ ՀԱՐԿ)

ԵԴ2/6188/02/24

ՈՐՈՇՈՒՄ
Հայցադիմումը վարույթ ընդունելու մասին

16 օգոստոսի 2024թ | ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Գ. Վարդանյանս, քննության առնելով «Ա-Էն Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/11 պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և գումար բռնագանձելու պահանջների մասին հայցադիմումը վարույթ ընդունելու հարցը.

ՊԱՐԶԵՑԻ

«Ա-Էն Քոնսթրաքշն» ՍՊ ընկերության ներկայացուցիչը 2024թ. հուլիսի 25-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/11 պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և գումար բռնագանձելու պահանջների մասին:
ՀՀ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի (դատավոր Դ. Մխեյան) 2024թ. օգոստոսի 2-ի որոշմամբ հայցադիմումը վերադարձվել է:
Որոշումը ստանալուց հետո հայցադիմումը կրկին ներկայացվել է դատարան, որը մակագրվել է դատավոր Գ. Վարդանյանին 2024թ. օգոստոսի 12-ին, իսկ Դատավորին հասանելի է դարձել 2024թ. օգոստոսի 13-ին:
Հայցադիմումը ներկայացված է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 121 և 122 հոդվածների պահանջներին համապատասխան և նույն օրենսգրքի 126 և 127 հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու

հիմքեր չկան:
ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 127 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ եռօրյա ժամկետում հայցադիմումի թերությունները վերացվելու և այն դատարան կրկին ներկայացվելու դեպքում հայցադիմումը համարվում է առաջին ատյանի դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը:
Հետևաբար՝ հայցադիմումը դատարանում պետք է ընդունված համարել 2024թ. հուլիսի 25-ին:
Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124, 125, 127, 199-200, 234.5 և 234.6 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Ա-Էն Քոնսթրաքշն» ՍՊ ընկերությունն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ թիվ ՀՀՔԿ-ԳՀԽԾՁԲ-21/11 պայմանագրի միակողմանի լուծումն անվավեր ճանաչելու և գումար բռնագանձելու պահանջների մասին, հայցադիմումն ընդունել վարույթ:
Հայցադիմումը համարել դատարան ներկայացված այն սկզբնապես ներկայացնելու օրը՝ 2024թ. հուլիսի 25-ին:
Թիվ ԵԴ2/6188/02/24 քաղաքացիական գործով կայացվող եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2024թ. սեպտեմբերի 5-ին՝ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

Դատավոր՝ Գրիգորի Վարդանյան

Digitally signed by
VARDANYAN GRIGORI

Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am